

դունած իր չափանիշներից: Անկախ Սփիւռքում գոյութիւն ունեցող առանձնա- յատուկ պայմաններից՝ նա դատապարտում է բոլոր ձեռնարկները, ուր բացակայում են կեանքն ու անկեղծ ապրումները, Հայ Հո- գու արտայայտութիւնը եւ գրականութեան ու արուեստի բարձր չափանիշները:

Սփիւռքահայ գրականութիւնը Հայ Հոգու արտայայտութիւններից մէկն է եւ որպէս այդպիսին արժանի է ուշադրու- թեան: Այսօր, քանի Սփիւռքում ապրում է Հայութեան մի հոծ զանգուած, Հայ գրա- կանութիւնն անհնար է պատկերացնել ա- ուանց իր կարեւոր բաղադրիչի՝ սփիւռքա- Հայ գրականութեան:

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՈՒԻՐԱԾ 1272 Թ. ԱԵՏԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Չուգասպետ Էմմա

1262 թ. Կիլիկեան թագաւորութեան տիրակալ Հեթում Ա.ն իր աւագ որդի Լե- լոնին ամուսնացնում է Կեռան իշխանու- հու հետ: Այս ամուսնութիւնը, թագաւո- րութեան ապագայ ժառանգներին ապահո- վելուց բացի, նպատակ ունէր լուծել պե- տութեան համար կարեւոր ներքին քաղա- քական մի շարք հարցեր¹: Կեռանը Լամբ- րոնի անառիկ ամրոցի տէր Հեթում իշխա- նի երեք դուստրերից մէկն էր: Հեթումեան արքայական ընտանիքը եւ Լամբրոնի իշ- խանական տունը սերում էին նոյն տոհ- մից², սակայն նրանց նախնիների միջեւ վէճ էր առաջացել գահին տիրելու մրցակ- ցութեան պատճառով: Կեռանի պապը՝ Կոստանդին Լամբրոնացի իշխանը, զէնքի դիմելով եւ ապստամբութիւն կազմակեր- պելով Լեւոն Գ.ի պապի՝ Կոստանդին Պայ- լի դէմ, պարտուել եւ սպանուել էր որպէս դաւաճան: Այս իրադարձութիւններից յե- տոյ Լամբրոնը դադարել էր Լամբրոնացի- ների սեփականութիւնը լինելուց: Սակայն Հեթում Ա.ի գահ բարձրանալուց յետոյ Կոստանդին պայլի խորհրդով Լամբրոնը վերադարձուել էր սպանուած Կոստանդին Լամբրոնացու որդուն՝ Հեթում իշխանին:

Հեթումեանների արքայատոհմի ներ- կայացուցիչներն առհասարակ մեծ սէր ու յարգանք չէին վայելում Հայ իշխանական տների շրջանում: Հեթում Ա.ի գահին տի-

րանալուց յետոյ իշխող արքայատոհմին սատարողները շատ քիչ էին: Դրանով էր պայմանաւորուած այն հանգամանքը, որ Լեւոն արքայազնը 1266 թ. գերի էր ընկել եւ տարուել Եգիպտոս. նա փաստացի իր փոքր զօրքով յայտնուել էր հակառակորդի ահռելի ուժերի դէմ, իսկ Հայ իշխանները օգնութեան չէին հասել նրան: Նման ան- բարենպաստ ներքին իրավիճակը շտկելու նպատակ էր հետապնդում Լեւոն արքա- յազնի ամուսնութիւնը Կեռան Լամբրոնա- ցու հետ: Այս ամուսնութիւնը պիտի հաշ- տեցնէր Հեթումեաններին եւ Լամբրո- նեաններին՝ թագաւորութեան ներսում ստեղծելով առաւել կայուն իրավիճակ եւ բարեբեր հող Լեւոն Գ.ի ապագայ կառա- վարման համար:

Ամուսնութեան կապակցութեամբ Լե- լոն արքայազնը թորոս Ռոսլինին պա- տուիրում է 1262 թ. հանրայայտ Աւետա- րանը նորապսակների ամուսնական շքեղ դիմանկարով: Այն այսօր գտնուում է Երու- սաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի հաւա- քածոյում:

Կեռան թագուհին, մեծ փառք էր վա- յելում Հայոց թագաւորութեան մէջ: Նրան շնորհուող գովաբանութիւնները անգամ յիշեցնում են Ջաբէլ թագուհու ունեցած համբաւը:

1272 թ. Կեռանը՝ ամուսնու թագա- դրութեան կապակցութեամբ պատուիրում է իր հանրայայտ աւետարանը, որն ընդու- նուած է կոչել Կեռան թագուհու Աւետա- րան:

1272 թ. Կեռանի Աւետարանը ոչ միայն արուեստի շքեղ եւ բարձրաճաշակ նմուշ է, այլեւ պատմական եզակի յուշար-

1 Կ. Մաթեոսեան, Հայոց Կեռան թագուհին, «Մշակոյթ», 1990, թիւ 1, յունուար-փետրուար, էջ 49-51:
2 Լեւոնի եւ Կեռանի մոյմ տոհմից սերուած լինելու հանգամանքով կարելի է բացատրել այն փաս- տը, որ մրանց բազմաթիւ զուակներից շատերը մահացել են դեռեւս մանուկ հասակում:

ձան: Այս ձեռագրում է ամփոփուած կիլիկեան թագաւորական ընտանիքի իւրօրինակ խմբակային դիմանկարը (պատկեր 1), որը ներկայացնում է Կեռան թագուհուն եւ Լեւոն Գ. արքային իրենց հինգ զաւակների հետ: Անմիջապէս ուշադրութիւն է գրաւում Կեռանի պատկերը՝ եւս մէկ անգամ հաւաստելով ձեռագրերի յիշատակարաններում թագուհու գեղեցկութեան մասին հիւսուող տողերը: Կեռանը կրում է ոսկեթել ասեղնագործ զգեստ՝ հաւանաբար զարդարուած թանկարժէք քարերով, ուսերը ծածկուած են մորթեայ երիզ ունեցող վերարկուով: Թագուհու գլուխը զարդարում է կախազարդերով թագը, որը նա կրում է գլուխը ծածկող քողի վրայից:

Հայոց թագաւորութեան պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղուող մի շարք գիտնականներ իրենց աշխատութիւններում³ ներկայացնում են Լեւոն Գ-ի եւ Կեռանի զաւակների անուններն ըստ ծննդեան թուականների, սակայն Կեռանի 1272 թ. Աւետարանի յիշատակարանը յանգեցնում է այլ եզրակացութիւնների, որոնք ստիպում են փոփոխութեան ենթարկել մինչ այդ յայտնի ցուցակները: Յիշատակարանը բաղկացած է երկու հատուածներից, որոնցից առաջինը գրուել է 1272 թ. ձեռագրի պատրաստ լինելուց յետոյ, իսկ երկրորդը հաւանաբար 1292 թ. յետոյ, քանզի այդտեղ արդէն արձանագրուած են Օշիւնի եւ Ալինախի անունները: Յիշատակարանի առաջին հատուածում բերուած են նախ 1272 թ. գրութեամբ ծնուած, այնուհետեւ նոյն թուականի գրութեամբ մահացած երեսնների անունները: Մեր ուշադրութիւնն առաջին իսկ հայեացքից գրաւում է

այն, որ մահացած երեսնների ցուցակում չկայ Կոստանդինի անունը⁴, ինչից հետեւում է, որ Կոստանդինը 1272 թ. դեռ ողջ էր: Իսկ դա կարող է նշանակել, որ դիմանկարում պատկերուած երեք որդիներից մէկը հաւանաբար Կոստանդինն է:

Լ. Չուգասոզեանը գտնում է, որ Լեւոն Գ-ի կողքին կանգնած երեսնները Հեթումը, Թորոսն ու Ռուբէնն են: Սակայն այս վարկածը կորցնում է իր ուժը 1272 թ. Կոստանդինի ողջ լինելու պարագայում:

Յիշատակարանում մեր ուշադրութիւնը գրաւող յաջորդ հանգամանքը այն է, որ Ռուբէնի անունը նշուած է առաջին հատուածում: Նա յիշատակուած է միայն երկրորդ հատուածում, որտեղ արդէն խօսուած է 1274 թ. նրա մահանալու մասին: Սրանից կարելի է ենթադրել, որ Ռուբէնը մանրանկարի ստեղծման պահին դեռ ծնուած չէր: Այսպիսով, պարզ է դառնում, որ մանրանկարում պատկերուած են Կոստանդինը, Հեթումը եւ Թորոսը: Փոքր-ինչ տարօրինակ է թուում այն, որ Լեւոն Գ-ն իր առաջնեկին կոչել է ոչ թէ հօր, այլ պապի անունով: Կոստանդինի ծննդեան վերաբերեալ որեւէ յստակ թուական չունենք, իսկ նրա անունը յիշատակուած է միայն 1270 թ. Լիսոնկայում Բարսեղ զրչի կողմից ընդօրինակուած Աւետարանի մէջ⁵: Յիշատակարանում ասուում է. «Ով երջանիկ դասք սրբազան քահանայից, որք հանդիպիք աստուածային սուրբ Աւետարանիս, յիշեալիք ի Տէր զարքայն Հայոց զԼեւոն, եւ զբարեպաշտ թագուհին իւր զԿեռան, եւ զորդին իւրեաց զԿոստանդին՝ զբարի շառակիղն, ի բարի արմատոց, որոց Տէր Աստուած տացէ ժա-

3 V. H. Rüdts Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans, The Structure of the Armeno-Cilician Dynasties*, III (H2) Paris, 1963, pp. 34-45; C. Mutafian, *L'Arménie Du Levant (XIe-XIVe siècle)*, t. I, Paris, 2012, p. 160. Լ. Տէր-Պետրոսեան, *Խաչակիրներն ու հայերը*, հտ. Բ, Երևան, 2007, էջ 376:

4 Ըստ Ռ. Կոլենբերգի եւ Լ. Տէր-Պետրոսեանի՝ Կոստանդինը ծնուել էր 1264 թ. եւ մահացել մահուկ հասակում (տե՛ս V. H. Rüdts Collenberg, *Աշխարհի հայերը*, հտ. Բ, էջ 376):
5 Ղ. Փիրղալեւեան, *Յիշատակարանը կամ Նշխարք պատմութեան հայոց*, հտ. Բ, Մաշտոցի ան. Մատենադարանի ամսիպ ձեռագրացուցակների ֆոնդ, ձեռագիր թիւ 4515, էջ 39-40:

մանակս երկայնս եւ խաղաղականս, եւ զաւրա(ս^ո)ցուսցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի, եւ պարագայց ամաւք շնորհեացէ մեզ ընդ երկայն աւուրս, ամէն, ամէն: Եւ որ զմեզ յիշեայ աղաւթիւք, եւ նա եղիցի յիշեալ»⁶: Այս հանգամանքը դարձում է տարօրինակ թուալ, երբ նկատի ենք առնում, որ մինչեւ 1270 թ. ստեղծուած մի շարք ձեռագրերում հանդիպում է Հեթումի անունը: Այսինքն, դա ստիպում է ենթադրել, որ Հեթումը ծնուել է Կոստանդինից առաջ, եւ այդպիսով տրամաբանական է դառնում նրանց անունների ընտրութիւնը Լեւոն Գ-ի կողմից:

Ա. Մաթեոսեանը եւ Կ. Մութաֆեանը հաւատացած են, որ Կոստանդինի անունը հանդիպում է նաեւ Հեթում Ա-ի 1266 թ. Աւետարանի յիշատակարանում⁷, ինչի վրայ հիմնուելով՝ Մութաֆեանը Կոստանդինի ծննդեան տարին է համարում 1266 թ.⁸: Երկու կարեւոր փաստ, սակայն, մեզ ստիպում է հերքել այս կարծիքը.

ա. Հեթում Ա-ի Աւետարանի յիշատակարանում Կոստանդին անունը ենթադրաբար աւելացուած է Ա. Մաթեոսեանի կողմից վնասուած հատուածում մնացած «...դին» վերջաւորութեանը. «Եւ յիշեցէք աղաւթիւք ի Տէր զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի դաստուածասէր թագաւորն Հեթում, եւ զբարէպաշտ թագուհին նորա Զապիլ՝ դուստր Լեւոնի արքայի / / / , եւ որդի սուրբ արքային զԺիրանածին պարոնն Լեւոն, որոյ մնանք Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծազգի կենակիցն իւր, զսրբասէրն Կեռան, եւ զգեռաբոյս մանուկ սոցա Հեթում, եւ զքորք իւր: Այլեւ զբարեպաշտուհիք եւ զաւրիորդք // (զԿոստան)դին աստուածապարգեւ, աս-

տուածապատիւ զաւակաւք իւրաւք, ուստերաւք եւ դստերաւք, եւ ամենայն ծննդաւք իւրեանց, որոց ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեացէ Քրիստոս Աստուած, եւ զկենդանիսն անխռով խաղաղութիւն»⁹:

բ. Այս յիշատակարանից պարզ է դառնում, որ 1266 թ. Յիմին արդէն ծնուել էր՝ «եւ զգեռաբոյս մանուկ սոցա Հեթում, եւ զքորք իւր», որտեղից հետեւում է, որ Հեթումը չէր կարող ծնուած լինել 1266 թ. յունուարին, ինչպէս ենթադրում են մի շարք աղբիւրներ, քանզի նա եւ Յիմին երկուորեակներ չէին: Ուստի առաւել տրամաբանական է դառնում Հեթումի ծննդեան տարին համարել 1265 թ.: Այստեղից էլ հետեւում է, որ Կոստանդինը նոյնպէս չէր կարող ծնուած լինել 1266 թ., քանզի քիչ հաւանական է, որ Կեռանը մէկ տարուայ մէջ երկու զաւակ լոյս աշխարհ բերէր:

Կոստանդինը յիշուած է որեւէ պատմական ժամանակագրութեան կամ արձանագրութեան մէջ, եւ փաստացի նրա անունը յիշատակող միակ աղբիւրը 1270 թ. Լիսոնկայում գրուած Աւետարանն է: Վերջինիս թուագրման հաւաստիութեան հարցում դժուար է լիովին վստահ լինել, քանզի նրա յիշատակարանը գրուած է տարբեր գրիչների կողմից: Միանգամայն հնարաւոր է, որ յիշատակարանի՝ Կոստանդինին նշող հատուածը աւելացուած լինի ձեռագրի ստեղծուելուց շատ աւելի ուշ: Չի բացառուում, որ յիշատակարանը վերաբերուած է 1278 թ. ծնուած «երկրորդ» Կոստանդինին: Սակայն այս պարագայում իրար է հակադրուում երկու փաստ՝ Ռուբէնի ծնունդը 1272 թ. եւ նոյն թուականին Սիբիլի մահը: Ռուբէնի ծննդեան մասին Կեռանի Աւետարանի 1272 թ. յիշատակարանը լռում է: Դա նշանակում է, որ մանրանկարի ստեղծման եւ, առաւել եւս, յիշա-

6 Ա. Մաթեոսեան, ԺԴ դարի յիշատակարաններ, Երևան, 1984, էջ 395-396:
7 Մաշտոցի ան. Մատենադարան, ձեռագիր թիւ 5458:
8 C. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, t. I, pp. 173.

9 Ա. Մաթեոսեան, *Աշխարհի հայերը*, հտ. Բ, էջ 334-335:

տակարանի գրուելու¹⁰ պահին Ռուբենը ծնունդ էր եղել: Այդպիսով, բացառում է մանրանկարում նրա պատկերը իրողութիւնը: Կեռանի 1272 թ. Աւետարանի յիշատակարանում Կոստանդինի անունը բացակայում է. այդուհանդերձ այստեղ բացակայում է նաև Ֆիմիի անունը, ով այդ պահի դրութեամբ միակ աղջիկ զաւակն էր, որ ողջ էր: Ուստի կարելի է շատ տարօրինակ չհամարել Կոստանդինի անունը չյիշուելը:

Այսպիսով, հաշուի առնելով, որ 1272 թ. Կեռանի յիշատակարանը չի նշում Կոստանդինի մահուան մասին, ինչպէս նաև համադրելով Լեւոնի եւ Կեռանի բոլոր զաւակների ծննդեան ու մահուան թուականները, հաշուի առնելով անուանակոչման աւանդոյթը, կարծում ենք, որ Կոստանդինը ծնունդ է 1270 թ., ինչով էլ կարելի է բացատրել նրա անունը առաջին անգամ ի յայտ գալը 1270 թ. Լիսոնկայի Աւետարանի յիշատակարանում: Յետագայ տարիներին ստեղծուած ձեռագրերի յիշատակարաններում Կոստանդինի չյիշատակուելը կարելի է բացատրել նրա առողջական վատ վիճակով, ինչը բացառում էր նրա՝ որպէս արքայատոհմի հաւանական շարունակող դիտուելը:

Ուստի, մեր կարծիքով, հնարաւոր է, որ Կեռանի Աւետարանի արքայական դիմանկարում պատկերուած են ըստ աւագութեան Հեթումը, Կոստանդինն ու Թորոսը: Վերջինս հաւանաբար մէկ տարեկան էր դիմանկարի ստեղծման պահին, քանզի ծնունդ է 1271 թ., եւ Կեռանի Աւետարանի յիշատակարանում նշուած է նրա անունը: Եթէ ուշադիր ուսումնասիրենք արու գաւակների դէմքերը, կը նկատենք, որ դրանք գրեթէ նոյնն են: Մանրանկարի ստեղծման տարում հազիւ մէկ տարեկան

կամ էլ մի քանի ամսական Թորոսը պատկերուած է որպէս եղբայրներին գրեթէ հասակակից երեխայ: Շատ հաւանական է, որ Թորոսին նկարելիս բնորոշ եղել է ճամբայ Հեթումը կամ նրա եղբայր Կոստանդինը, եւ դրանով է բացատրուում դէմքերի այդ աստիճան նմանութիւնը:

Վերադառնալով Կեռանի Աւետարանի յիշատակարանում հանդիպող ուշադրութեան արժանի մանրամասներին՝ անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ յիշատակարանի առաջին հատուածում ասուում է Սիբիլի մահուան մասին¹¹, մինչդեռ ընտանեկան դիմանկարում Կեռանի կողքին տեսնում ենք երկու աղջիկ երեխայ: Դուստրերից առաջինն անկասկած Ֆիմին է, ով ծնունդ էր 1266 թ.: Մեզ յայտնի է, որ Լեւոն Գ.ն ունեցել է նաև երկու ապօրինի դուստր, որոնցից առաջինը ծնունդ էր 1268/1269 թ.: Սակայն անհնար է, որ Կեռանի պատուիրած Աւետարանի մանրանկարում պատկերուած լինէր Լեւոնի ապօրինի զաւակը: Ուստի մնում է միայն մէկ բացատրութիւն. Սիբիլը մահացել է դիմանկարի ստեղծուելուց անմիջապէս յետոյ, մինչեւ ձեռագրի յիշատակարանի գրուելը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ձեռագրի մանրանկարները ստեղծուել են յիշատակարանի գրուելուց առաջ, սակայն ոչ աւելի վաղ, քան 1271 թ., հակառակ դէպքում մանրանկարում չէինք ունենայ Թորոսի պատկերը: Այս փաստերն իրար համադրելու շնորհիւ հնարաւոր է նաև ենթադրել Սիբիլի մահուան թուականը՝ 1272: Այսպիսով, Կեռանի Աւետարանի յիշատակարանի եւ արքայական դիմանկարի շնորհիւ կարծես յաջողուած է ստանալ Լեւոնի եւ Կեռանի երեխաների ծննդեան ու մահուան վերաբերեալ մի քանի տուեալ: Ուստի կարող ենք առաջարկել

10 Մանրանկարում Սիբիլի հանդէս գալն ապացուցում է, որ յիշատակարանը գրուած է մանրանկարի ստեղծուելուց յետոյ:

11 Սիբիլի մահուան թուականն մինչ այս անյայտ է եղել:

նրանց ծննդեան եւ մահուան թուականներով հետեւեալ նոր ցուցակը¹².

1. Զաբէլ՝ ծնունդ 1263 թ., մահացած 1266 թ.,
2. Հեթում՝ ծնունդ 1265 թ. յունուարին¹³, սպանուած 1307 թ.,
3. Ֆիմի՝ ծնունդ 1266 թ., մահուան թուականն անյայտ է,
4. Սիբիլ՝ ծնունդ 1269 թ., մահացած 1272 թ.¹⁴,
5. Կոստանդին՝ ծնունդ 1270 թ., մահացած մանուկ հասակում (հաւանաբար 1275/1276 թ.),
6. Թորոս՝ ծնունդ 1271 թ. հոկտեմբերին¹⁵, սպանուած 1298 թ.,
7. Ռուբէն՝ ծնունդ 1272 թ., մահացած 1274 թ.,
8. Զաբէլ՝ ծնունդ 1273 թ.¹⁶, սպանուած 1323 թ.,
9. Սմբատ՝ ծնունդ 1274/1275 թ., մահացած 1310/1311 թ.,
10. Սիբիլ՝ ծնունդ 1274/1275 թ., մահուան թուականն անյայտ է,
11. Կոստանդին՝ ծնունդ 1276/1277 թ., մահացած 1308 թ.,
12. Ռիտա՝ ծնունդ 1278 թ., մահացած 1333 թ.,
13. Թեֆանո՝ ծնունդ 1278 թ., մահացած մանուկ հասակում,

12 Սկզբնաղբիւրներում տրուող թուականները յաճախ տարբերուում են: Մենք փորձել ենք դասակարգել դրանք ընտրելով մեզ առաւել հաւանական թուացողները եւ հաշուի առնելով յետոյն դարձրեալ ընդմիջումները:

13 Այսպէս է ճշտում Հեթում Բ-ի տարեգրութեան մէջ (տե՛ս Հեթում Բ-ի տարեգրութիւնը, - Մանր ժամանակագրութիւններ» (XII-XVIII դար), կազմ. Վ. Յակոբեան, հտ. I, Երեւան, 1951, էջ 83):

14 Այս թուականը տալիս ենք Կեռանի 1272 թ. Աւետարանի յիշատակարանի առաջին հատուածի վրայ հիմնուելով:

15 Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վեներտիկ, 1956:

16 Հեթում Բ-ի տարեգրութիւնը, - Մանր ժամանակագրութիւններ» (XII-XVIII դար), էջ 84:

14. Ներսէս՝ ծնունդ 1279/1280 թ., մահացած 1301 թ.,
15. Օշին՝ ծնունդ 1282/1283 թ., մահացած 1320 թ.,
16. Ալինախ՝ ծնունդ 1282/1283 թ., մահացած 1310 թ.:

Այս ցուցակի վրայ հիմնուելով կարելի է մտաւորապէս պատկերացում ստանալ Կոստանդին Ա.ի մահուան թուականի վերաբերեալ: Տրամաբանական է, որ Լեւոն Գ.ն ցանկացել էր անպայման որդիներին մէկին կոչել իր պապի անունով, ուստի Կոստանդին անունը կրող զաւակի մահից յետոյ ծնունդ առաջին իսկ որդին պիտի ստանար այդ անունը: 1274/1275 թ. ծնունդ զաւակը ստացել է Սմբատը, այլ ոչ թէ Կոստանդին անունը, ուստի ենթադրուում է, որ Կոստանդինը մահացել է Սմբատի ծնունդուց յետոյ՝ 1275/1276 թ.:

Կեռանի 1272 թ. Աւետարանը, որն այսօր գտնուում է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի հաւաքածոյում, արքայական դիմանկարից բացի, ունի տասներեք ամբողջական էջ զբաղեցնող տէրուական մանրանկարներ («Աւետում», «Քրիստոսի ծնունդը», «Տեառն ընդառաջ», «Ղազարոսի յարուսթիւնը», «Այլակերպութիւն», «Խաչելութիւն», «Համբարձում», «Վերջին ընթրիք», «Իւղաբեր կանայք Քրիստոսի գերեզմանի մօտ», «Մկրտութիւն», «Ունելուայ», «Հոգեգալուստ», «Թովմայի անհաւատութիւնը»), աւետարանիչների դիմանկարներ, խորաններ, անուանաթերթեր եւ հարիւր երեք լուսանցազարդ:

Երկար ժամանակ Կեռանի Աւետարանը համարուել է Թորոս Ռոսլինի աշխատանքը, սակայն յետագայում ուսումնասիրողները յանգել են այն կարծիքին, որ մատենանը նկարազարդուել է մէկ այլ վարպետի կողմից, ով եղել է Ռոսլինի աշակերտը¹⁷:

17 Լ. Չուգասեան, Կեռան թագուհու 1272 թ. Ձեռագիրը, - Սիոն, 1991, սեպտ.-դեկտ., էջ 187-190:

Որոշ գիտնականներ այս ձեռագիրը նմանեցնում են Վասակ իշխանի Աւետարանին համարելով, որ դրանք նկարագարողուած են միեւնոյն մանրանկարչի ձեռքով: Մեր կարծիքով այս երկու մատեանների գլխաւոր մանրանկարչները միանգամայն տարբեր մարդիկ են: Կեռանի Աւետարանի կերպարների դէմքերը դրամատիկութեամբ յագեցած առանձնայատուկ մշակում ունեն, ինչը բնորոշ է Վասակի Աւետարանի կերպարներին: Այս դրամատիկութիւնը յատկապէս արտայայտուած է դէմքի մաշկի մշակման համար մոխրագոյն եւ մուգ կանաչ պիգմենտների օգտագործմամբ: Ի տարբերութիւն Կեռանի Աւետարանի, Վասակ իշխանի պատուիրած ձեռագրում դէմքերն ունեն որոշակի աշխուժութիւն եւ մարդամօտութիւն: Կարելի է ասել, որ Կեռանի Աւետարանի մանրանկարները ոճը յիշեցնում է բիւզանդական պալէոլոգեան շրջանի սրբապատկերները:

Առհասարակ ձեռագրի բոլոր մանրանկարները, սկսած արքայական դիմանկարից եւ վերջացրած տէրունական պատկերներով, թէ՛ ոճական, թէ՛ պատկերագրական առումով բիւզանդական ուժեղ ազդեցութիւն են կրում: Միեւնոյն ժամանակ դրանք դրսեւորում են զուտ կիլիկեան արուեստին բնորոշ երեւոյթներ եւ մանրամասներ, որոնք, համադրուելով օտար ասիական եկող ազդեցութիւնների ալիքի հետ, կազմում են կատարելութեան հասնող գեղարուեստական նուրբ ներդաշնակութիւն:

Մի քանի հետաքրքիր դիտարկում անենք նաեւ այն տեսակէտի վերաբերեալ, ըստ որի ձեռագիրը նկարագարողուած է Թորոս Ռոսլինի աշակերտների կողմից: Աւետարանը գննելիս ակնյայտ է դառնում, որ աշխատել է երեք վարպետ: Ընդ որում՝ դրանցից մէկը գլխաւոր վարպետն է, ով հեղինակել է տէրունական նկարների հիմնական կերպարների դէմքերը եւ աւետարանիչների դիմանկարները:

Երկրորդ վարպետի աշխատելու եղանակն առաւել ակնյայտ է երեւում Ղազարոսի յարութեան տեսարանի երկրորդական կերպարների նկարագարողման մէջ: Նրա ձեռքով են պատկերուած Քրիստոսի ծննդեան տեսարանի մոգերը, հրեշտակները, Յովսէփն ու Մանկան լուսանքի դրուագը: Այս վարպետի վրձինն է պատկանում նաեւ լուսանցապատկերների մեծամասնութիւնը: Կեռանի Աւետարանում նա հանդէս է գալիս աւելի շուտ որպէս օգնական: Տուեալ վարպետի ձեռագիրը յետագայում հանդիպում ենք նաեւ 1286 թ. Հեթում Բ.ի Ճաշոցում, որտեղ նա արդէն գլխաւոր մանրանկարիչներից մէկն է:

Մեզ համար ամենամեծ հետաքրքրութիւնը ներկայացնում է երրորդ վարպետը, որի ոճը երեւան է գալիս երկու տէրունական մանրանկարների շատ փոքր դրուագներում: Առաջինը «Իւղաբեր կանայք Տիրոջ գերեզմանի մօտ» (պատկեր 2) տեսարանում քնած զինուորների պատկերներն են, իսկ երկրորդը Հոգեգալստեան տեսարանի ներքեւի կամարի մէջ վերցուած շնագլուխը եւ դրան ուղեկցող կերպարներն են (պատկեր 3): Կարելի է ասել, որ երրորդ վարպետը կատարել է աշխատանքի ամենափոքր մասը, սակայն դա էլ բաւական է որոշակի արժէքաւոր ենթադրութիւններ կատարելու համար: Այս վարպետի գործերը նկատու ենք Թորոս Ռոսլինի 1262 թ. Սեբաստիայի Աւետարանի եւ 1266 թ. Մաշտոցի բազմաթիւ մանրանկարներում, որտեղ նա հանդէս է գալիս որպէս Ռոսլինի օգնական եւ աշակերտ՝ նկարելով երկրորդական կերպարները: Սպիտակի օգտագործմամբ նրա պատկերած վարդագոյն մաշկ ունեցող դէմքերը, որոնք մշակուած են, հնարաւոր է չփոթել մէկ այլ մանրանկարչի աշխատանքների հետ:

Այսպիսով, ստացւում է, որ առաջին երկու մանրանկարիչները, որոնք համագործակցել են Կեռանի Աւետարանում եւ որոնցից մէկը գլխաւոր նկարիչն է, իսկ

միւսը հաւանաբար նրա աշակերտը, առաջին անգամ հանդիպում են հէնց այս ձեռագրում: Նրանց ոճը մեզ երբեք էլ հանդիպել Թորոս Ռոսլինի կամ 1272 թ. առաջ նկարագարողուած ձեռագրերի որեւէ դրուագում: Ուստի ակնյայտ է, որ նրանք Ռոսլինի աշակերտները չեն եղել: Այս դէպքում առաւել հետաքրքիր է պարզել, թէ ով է Կեռանի Աւետարանի գլխաւոր մանրանկարիչը: Ըստ հուլիանի, այս վարպետը միանգամից դարձել է հիմնական մանրանկարիչ, իսկ Ռոսլինի աշակերտը, ով տրամաբանօրէն պէտք է իր ուսուցչից յետոյ լինէր նրան փոխարինողը, շարունակել է մնալ օգնականի դերում եւ աշխատել մէկ այլ մանրանկարչի հետ, ով առաւել արհեստավարժ էր, քան ինքը: Նման պարագայում առաջ է գալիս երկու վարպետ:

ա. Կեռանի Աւետարանի գլխաւոր նկարիչը, աշխատելով Ռոսլինի հետ, մինչեւ 1272 թ. նկարագարել էր նաեւ այլ ձեռագրեր, սակայն դրանք մեզ չեն հասել, ինչը քիչ հաւանական ենք համարում:

բ. Այս մանրանկարիչը, հաւանաբար եկել էր այլ երկրից՝ սովորած լինելով որեւէ արեւմտեան դպրոցի վարպետների միջավայրում եւ իր հետ բերելով այնտեղ ձեռք բերած մեծ փորձն ու աւանդոյթները:

Երկրորդ տարբերակն ամէնից հաւանականն է թւում, քանզի չի կարող լինել որեւէ այլ տրամաբանական պատճառ, որը կը բացատրէր այս նկարչի յանկարծակի ի յայտ գալը եւ անմիջապէս թագաւորական նման կարեւոր ձեռագրի պատուէր յանձն առնելը: Այս վարպետի ձեռքով է ստեղծուել արքայական ընտանիքի խմբակային դիմանկարը:

Կեռանի 1272 թ. Աւետարանն առանձնայատուկ տեղ ունի ԺԳ. դարի արքունական ձեռագրախմբի մէջ: Ի տարբերութիւն այս ժամանակաշրջանի միւս ձեռագրերի, այստեղ շատ լաւ են պահպանուած թէ՛ մանրանկարները, թէ՛ յիշատակարանը: Այս

մատեանը ԺԳ. դարի կիլիկեան մանրանկարչութեան մէջ իւրօրինակ կապող օղակ է, ասես անցումային մի փուլ ուսուցիչական եւ յետուսուցիչական արուեստի միջեւ:

Կեռան թագուհին այս ձեռագիրը նուիրել է Ակնների վանքին: Ի. Ռապտին չի բացատրում, որ նման նուիրատուութիւնը նպատակ է ունեցել վերականգնելու Ակնների՝ որպէս թագաւորական դամբարանի դերը¹⁸, քանզի այստեղ էր թաղուած Լեւոն Ա. թագաւորը: Սակայն թէ՛ Լեւոն Բ.ն եւ թէ՛ Կեռան թագուհին թաղուել են Դրազարկի վանքում, եւ այսպիսով շարունակուել է Ռուբինեան արքաների աւանդոյթը:

Վ. Հ. Ռութ-Կոլենբերգը նշում է, որ կեանքի վերջին տարիներին Կեռանը դարձել է միանձնուհի, մտել Դրազարկի վանքը՝ ստանալով Թեւաննա կամ Թէոֆանիա անունը¹⁹: Այս տեղեկութիւնը տարակուսանք է յարուցում: Կեռանի՝ Թեւաննա անունը ստանալու վերաբերեալ որեւէ յիշատակում մեզ չի հանդիպել, եւ պարզ է, թէ ինչ աղբիւրներից է Ռութ-Կոլենբերգը ստացել նման տեղեկութիւն: Սակայն 1272 թ. գրիչ Ստեփանոս Իրիցորդու ընդօրինակած ձեռագրի յիշատակարանից իմանում ենք, որ այն պատուիրուած է եղել Կեռանի մօր կողմից, ում անունն էր Թեւանու (Թեւաննա)²⁰: Այս մատեանն ամփոփում է Վարդան Արեւելցու «Լուծմունք ի Սուրբ Գրոց» (Ժղլանք) խորագիրը կրող երկը: Ձեռագրի յիշատակարանը նշում է. «Ձա-

18 I. Rapti, *Featuring the King: Rituals of Coronation and Burial in the Armenian Kingdom of Cilicia. Court Ceremonies and Rituals of Power in Byzantium and the Medieval Mediterranean, Comparative Perspectives*, Boston, 2013, pp. 291-335.
 19 Տե՛ս W. H. Rüdts-Collenberg, *Ար. աշխ.*, էջ 35-45: Ծնորհակալութիւն եմք յայտնում Սամուէլ Գրիգորեանին մեր ուշադրութիւնն այս փաստի վրայ հրաւիրելու եւ թեմայի վերաբերեալ խորհրդատուութեան համար:
 20 Ն. Պողարեան, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 414. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մատենադարան, ձեռագիր թիւ 898:

մենագով եւ զտրտմաբան վարդապետն Վարդան՝ զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեռան թագուհէ՝ Թեւանու հրամայեաց ինձ մեղաւորի Ստեփաննոսի եւ մականունն Իրիցորդի գրել զհոգիալից տառս՝ ի մխիթարութիւն աստուածասիրաց անձանց: Արդ, աղաչեմ, որք հանդիպիք սմա յիշեալիք աղօթիւք զվերոյ գրեալն՝ զհոգեւոր մայրն ա[մենայն] կրօնաւորաց, եւ զաստուածատուր դստերքն իւր՝ հանդերձ ուստերօք եւ դստերօք, անփորձ մնալ յաստիս եւ ի հանդերձեալ գալստեանն յաջագահ դասուն հանդիպիլ սմա, եւ ընդ հրեշտակս փառաւորել զամենասուրբ երրորդութիւնդ, յանըստառ յաւիտեանս, ամէն»²¹:

Ըստ երեւոյթին, Ռութ-Կոլենբերգը սխալուել է Կեռանի մօր անունը նշող այս կամ որեւէ այլ ձեռագրի յիշատակարանը մեկնաբանելիս, քանզի գրեթէ անհաւանական է թուում, որ Կեռանը վանք մտնելիս որպէս հոգեւոր անուն վերցնէր մօր անունը: Այս հարցի շուրջ ենթադրութիւններ անելու ընթացքում մեր ուշադրութիւնը գրաւեց մէկ այլ ձեռագիր²², որի 1293 թ. յիշատակարանում կարգում ենք. «...եւս առաւել զծիրանածին որդիսն Լեւոնի թագաւորի զԱշինն եւ զԱլինախն եւ զմայր Քրիստինէն ողորմութեան քում արժանի արա դասել ընդ սուրբս քո, որ աւգնեցին ի սուրբ Աւետարանս...»²³: Բազմաթիւ յիշատակարաններից մենք յստակ գիտենք, որ Օշինի եւ Ալինախի մայրը Կեռանն է, ինչը թոյլ է տալիս միանգամից բացառել նրանց այլ կնոջից ծնուած լինելու վարկածը: Իսկ թէ ով է այս ոմն Քրիստինէն, կարող ենք փորձել ենթադրութիւններ անել: Կ. Մութաֆեանը ենթադրում է, որ այս Քրիստինէն որեւէ արիւնակցական կամ բարեկամական կապ չունի զոյգ եղ-

բայրների հետ, եւ «մայր» բառն այստեղ գործածուած է որպէս միանձնուհուն բնորոշ դիմելաձեւ²⁴: Չունենալով որեւէ այլ փաստ Կեռանի հոգեւոր անուն վերաբերեալ՝ կարող ենք ենթադրել, որ վերոյիշեալ յիշատակարանում հանդիպող Քրիստինէն ինքը Կեռանն էր, ով վերցրել էր այդ անունը վանք մտնելու պահին, քանզի 1293 թ. Կեռանը ողջ էր, եւ անհնար է, որ այլ կնոջ անուն յիշուէր որպէս երկուորեակների մայր:

Վերադառնալով Կեռան թագուհուն նուիրուած բոլոր ներբողներին ու գովաբանութեան խօսքերին՝ հարկ է նշել, որ դրանք ամենեւին պատահական եւ չափազանցուած չեն: Նա հայոց թագաւորութեան պատմութեան մէջ եզակի պատմական կերպար է եւ, որպէս Լեւոն Գ.ի թագակից ու խորհրդատու, մեծագոյն դեր է ունեցել պետութեան ներքին կեանքում: Եթէ Ջաբէլ թագուհու՝ իր ամուսինների հետ միաժամանակ երկու անգամ թագադրուելու մասին յիշատակումներ կան, Կեռանի թագադրման վերաբերեալ, ցաւօք, տեղեկութիւններ չեն պահպանուել: Սակայն մեր ուսումնասիրած Կեռանին պատկերող դիմանկարներում թագուհին ամենուրեք ներկայացուած է ամուսնուն հաւասար, ինչով ամբողջանում է պատմական աղբիւրներում նրան վերագրուող կերպարը:

Կեռանը մահացել է 1285 թ. յուլիսի 28-ին եւ թաղուել է Դրազարկում:

21 Ա. Մաթեոսեան, նշ. աշխ., էջ 419-420:
 22 Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց վանքի հաւաքածու, ձեռագիր թիւ 2612:
 23 Ա. Մաթեոսեան, նշ. աշխ., էջ 723:

24 C. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, t. 1, pp. 173-174, 350.



Արմենիայի պատմական զանգուակ

